

ՆԻՆԱ ԿՈՒՑԱՆՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



ԱՆԱՐԺԱՆ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ

Գիտական հոդվածը նվիրված է ՀՀ ժառանգական իրավունքի մի այնպիսի ինքնատիպ ինստիտուտի, ինչպիսին է անարժան ժառանգների ինստիտուտը: Տվյալ ինստիտուտը ոչ միանշանակ է ընդունվում իրավական գրականության մեջ, ավելին, ՀՀ օրենսդրության մեջ այդ ինստիտուտի ներմուծումը դեռևս հեռու է բավարար գնահատականից: Անարժան ժառանգների հետ կապված ժառանգական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում սույն հետազոտության բուն իմաստն է հանդիսանում սոցիալական և ինդիվիդուալիստական սկզբունքների խելամիտ հավասարակշռումը, որը խախտված է գործող իրավակիրառման սահմաններում:

Հեղինակը, հետազոտելով մի շարք երկրների իրավական փորձն ու իրավակիրառումը, նաև հաշվի առնելով հայկական ընտանեկան-իրավական կուլտուրայի առանձնահատկությունները, հետաքրքիր վերլուծություն է կատարել և ներկայացրել է ընդունելի առաջարկություններ, որոնք էականորեն կարող են ազդել Հայաստանի Հանրապետության ժառանգական իրավունքի հետագա կատարելագործման վրա:

Հիմնարար բառեր- անարժան ժառանգ, ժառանգ, քաղաքացիական օրենսգիրք, ժառանգատու, ժառանգման իրավունք:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվում է անարժան ժառանգների ինստիտուտը, սակայն հիշյալ ինստիտուտը դեռևս միանաշանակ չի ընկալվում իրավագիտական շրջանակների կողմից: Այս ինստիտուտի օրենսդրական լիարժեք ներդրման հարցում կան բավական իրավական բացեր և չկարգավորված հարցեր, որոնց վերլուծությանն էլ նվիրված է սույն համետագիտական ուսումնասիրությունը:

Ինչպես նշում է պրոֆ. Գ.Հ.Ղարախանյանը, խորհրդային քաղաքացիական իրավունքին հայտնի չէր «անարժան ժառանգի» ինստիտուտը: Նույնիսկ Հայկական ԽՍՀ 1923թ. քաղ. օր. 422-րդ հոդվածը քաղաքացուն իրավունք էր տալիս իր ամբողջ գույքը կամ նրա մի մասը կտակով թողնել ցանկացած անձի, լինի նա ըստ օրենքի ժառանգ, թե չլինի: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մի քանի երկրներ (Բուլղարիա, Չեխոսլովակիա, Լեհաստան) արդեն 50-ական թվականներին իրենց քաղաքացիական օրենսգրքերով ընդունում էին «անարժան ժառանգների» գոյությունը¹:

Իհարկե, քաղաքացիական օրենսգրքի՝ ժառանգման իրավունքին վերաբերող նորմերը ժառանգատուին հնարավորություն էին տալիս իր հայեցողությամբ առանձին անձանց զրկել ժառանգե-

լու իրավունքից: Բայց, այնուամենայնիվ, երբեմն քաղաքացին՝ ժառանգատուն, միշտ չէ, որ հնարավորություն էր ունենում իր վերաբերմունքը դրսևորել այդ հարցում: Խորհրդային դատական պրակտիկայում դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին արդեն արձանագրվում էր, որ «...ժառանգատուի դիտավորյալ և քրեական օրենսգրքով պատժելի սպանությունը այդ սպանություն կատարած ժառանգին զրկում է սպանվածի գույքը ժառանգելու իրավունքից»²:

Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգիրքը նախատեսեց նշված ինստիտուտը և արտացոլեց 534-րդ հոդվածում, համաձայն որի՝ ժառանգման իրավունքից զրկվում էին հետևյալ անձինք՝

- ա) նրանք, ովքեր ժառանգատուի, նրա ժառանգներից որևէ մեկի դեմ կամ ժառանգատուի կտակում արտահայտված վերջին կամքի իրականացման դեմ ուղղված իրենց հակաօրինական գործողություններով նպաստել են իրենց որպես ժառանգներ ճանաչելուն (օրինակ՝ ժառանգատուի կամ ժառանգներից մեկի կյանքի դեմ դիտավորյալ ոտնձգումը, կտակարարի դեմ բռնություն կամ սպառնալիք գործադրելը, կտակ կեղծելը և այլն),
- բ) մահացած զավակի նկատմամբ ծնողական

www.journal.lawinsstitute.am

իրավունքներից զրկված ծնողները, որոնց այդ իրավունքները չեն վերականգնվել ժառանգության բացման պահին,

զ) ժառանգատուին պահելուց չարամտորեն խուսափող ծնողները և չափահաս զավակները, որոնք օրենքով պարտավոր էին պահել նրան³:

ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրքն անհրաժեշտաբար նախատեսեց քննարկվող ինստիտուտը, քանզի դրա անհրաժեշտությունը պրակտիկան ինքն էր ապացուցել: ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրքը 1191-րդ հոդվածում նշում էր անձանց, ովքեր մեկուսացվում էին ժառանգումից՝ այդ անձանց անվանելով «անարժան ժառանգներ»⁴: Համաձայն ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝

1. Ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ: Բացառություն են կազմում այն անձինք, որոնց նկատմամբ ժառանգատուն կտակ կազմել է մահափորձ կատարելուց հետո:

2. Ըստ օրենքի ժառանգության դեպքում ժառանգությունից մեկուսացվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողները, որոնց ծնողական իրավունքները չեն վերականգնվել ժառանգությունը բացվելու ժամանակ:

Նախ այդ ինստիտուտի անվանման շուրջ լիովին համակարծիք ենք պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի հետ, ով գրում է. «*«Անարժան ժառանգ» բառակապակցությունը, անշուշտ, իր մեջ պարունակում է քաղաքացու՝ ժառանգ լինելու իմաստը, այսինքն՝ ժառանգ, որը դրան արժանի չէր: «Անարժան» համարվում են այն քաղաքացիները, ովքեր իրավունք չունեն ժառանգ լինել, այսինքն՝ ժառանգ չեն: Եվ եթե այդպես է, ապա ճիշտ կլինի նրանց, թեկուզև անարժան, ժառանգ չանվանել, այլ օգտագործել Հայկական ԽՍՀ 1964 թ. Քաղ. օր. իրոք դիպուկ ասված՝ «Ժառանգման իրավունք չունեցող քաղաքացիներ» արտահայտությունը, որն ավելի ճիշտ է արտահայտում իրերի իսկական դրությունը: Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ իրականում անարժան ժառանգները ոչ թե ժառանգությունից մեկուսացվում են, այլ զրկվում են ժառանգելու իրա-*

վունքից»⁴:

Քաղաքացիական օրենսդրությամբ անարժան ժառանգների ինստիտուտը նախատեսվելիս օրենսդիրը ելնում է ժառանգատուի իրական կամ ենթադրյալ կամքից ու ցանկությունից, որ ժառանգատուն հենց այդպես էլ կվարվեր, եթե ողջ լիներ և հնարավորություն ունենար: Ստացվում է այնպես, որ պետությունը հանդես է գալիս ժառանգատուի «ներկայացուցչի» դերում՝ իրեն վերագրելով ներկայացվողի անունից հանդես գալու և ի շահ նրան գործելու լիազորություններ: Համարվում է, որ անարժան ժառանգների ինստիտուտի ներդրումը համարվում է ինդիվիդուալիստական հիմունքների դրսևորում՝ որպես ժառանգատուի իրական կամ ենթադրյալ ողջամիտ կամքի արտահայտության:

Անարժան ժառանգների ինստիտուտի օրենսդրական ամրագրումը հետևանք էր պրակտիկայից եկող պահանջի, որը միևնույն ժամանակ պրակտիկ լայն տարածում և կիրառում ստացավ դրանով հանդերձ հանդիսանալով գիտական բուռն բանավեճերի առարկա:

Պետք է ասել, որ անարժան ժառանգների ինստիտուտը գործող օրենսդրությամբ հիմնականում կրկնում է նախորդ օրենսդրությանը, սակայն առկա են նաև հիմնավոր տարբերություններ, ընդ որում, գործող օրենսդրությամբ նախատեսվող տարբերությունների մեջ տրամաբանություն չի նկատվում. մի պարագայում օրենսդիրը կրճատում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են ճանաչվել ժառանգներ և մեկուսացվել ժառանգությունից, մյուս պարագայում օրենսդիրը նախատեսում է այնքան լայն չափանիշներ, որոնց պարագայում անհամեմատ կարող է ընդլայնվել անարժան ժառանգ ճանաչվելու հավակնող անձանց շրջանակը: Այս երկու ասպեկտների մասին խոսենք ավելի հանգամանորեն:

Ասպեկտ առաջին: Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգիրքը (534-րդ հոդված) նախատեսում էր անձանց երեք կատեգորիաներ, որոնք կարող էին անարժան ժառանգներ համարվել: Դրանցից երկուսը նախատեսվել են գործող օրենսդրությամբ (ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր)՝ քացառությամբ մեկ կատեգորիայի. ովքեր են հանդիսանում՝ ժառանգատուին պահելուց չարամտորեն խուսափող ծնողները և չափահաս զավակները, որոնք օրենքով պարտավոր էին պահել ժառանգատուին⁵: Այս հիմքով անձանց

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անարժան ժառանգ ճանաչելը և նրանց ժառանգությունից մեկուսացնելը լուրջ դերակատարում կարող էր ունենալ ընտանեկան-ազգայական կապերի ամրապնդման և կայունության ապահովման գործում, անձի շուրջ ավելի կկոնսոլիդացնեի իր ընտանիքի անդամներին, իսկ նման հիմքի բացակայությունը միայն և միայն կվնասի ընտանեկան կապերին:

ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթը, որը վերաբերում է *ծնողական իրավունքներից զրկված ծնողներին* անարժան ժառանգ համարելուն, բոլորովին չի ներառում Հայկ.ՄՍՀ քաղ.օր. 534-րդ հոդվածով ամրագրված պահանջը, որ «*ժառանգատուին պահելուց չարամտորեն խուսափող ծնողները*» ևս կարող են անարժան ժառանգ համարվել:

Ծնողական իրավունքից զրկելը և ծնողական իրավունքների սահմանափակումը (որը հետևում է երեխային պահելուց չարամտորեն խուսափելու ծնողական վարքագծին), որպես երկու առանձին ինստիտուտներ, հստակ կարգավորվում են ՀՀ ընտանեկան օրենսգրքով: Այսպես, ՀՀ ընտ.օր. 63-րդ հոդվածը նախատեսում է ծնողական իրավունքների սահմանափակման ինստիտուտը, երբ, ելնելով երեխայի շահերից, դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ **առանց ծնողական իրավունքներից զրկելու** (ընդգծ. մերն է): Ծնողական իրավունքների սահմանափակումն թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ բրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն):

Ծնողական իրավունքների սահմանափակումն թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար:

Թեև ծնողական իրավունքների սահմանափակումն իր շարունակության մեջ կարող է հանգեցնել ծնողական իրավունքներից զրկելուն, միևնույն է, այն ինքնին դեռևս ծնողական իրավունքից զրկում չի համարվում և ձևական-իրավական առումով՝ չի

կարող հիմք հանդիսանալ իրենց իրավունքների մեջ սահմանափակված ծնողներին անարժան ժառանգ ճանաչելու և ժառանգությունից մեկուսացնելու համար: Այս երկու հիմքերի տարբերակման մասին նշում է նաև ռուս իրավագետ Ռ.Ա.Կաբատովը՝

Հիշյալ երկու կատեգորիաները չնույնացնելով հանդերձ՝ մեր համոզմամբ, նրանցից յուրաքանչյուրի հանդեպ օրենսդրական տարբերակված մոտեցումն անհրաժեշտություն է, որոնցից՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողներն արժանացել են օրենսդրի բացասական վերաբերմունքին, մինչդեռ երեխաներին պահելուց չարամտորեն խուսափող ծնողները նման բացասական վերաբերմունքից դուրս են մնացել: Օրենսդրի նման մոտեցումը չի բխում ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի տրամաբանությունից, ըստ որի՝ **ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:** Դա առավելապես չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով ամրագրված պետության այն պարտականության տրամաբանությանը, ըստ որի՝ **տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրն է, մասնավորապես, ընտանիքը պաշտպանելը և հովանավորելը:** Պետությունը Սահմանադրությամբ նման պարտականություն է ստանձնում, մյուս կողմից քաղաքացիական օրենսդրությամբ հանում է այն հիմքերը, որոնք ինքնին կոչված էին ամրապնդելու ընտանիքն ու ընտանեկան կապերը: Համեմայն դեպս, դժվար է նման հիմքի բացակայությունը որակել նաև որպես ինդիվիդուալիստական հիմունքների ամրապնդում, իբրև թե անհատը ազատագրվում է պարտադրված ընտանեկան կապերից ու հարաբերություններից և ավելի ազատորեն կարող է տնօրինել իր ճակատագիրը:

Մեր համոզմունքն է, որ նախորդ օրենսդրությամբ սահմանված անձանց կատեգորիան, որը կարող է մեկուսացվել ժառանգությունից, պետք է վերականգնվի գործող օրենսդրությամբ:

Ասպեկտ երկրորդ: Համաձայն ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածի 1-ին կետի՝ «*Ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ:*

www.journal.lawinsstitute.am

Բացառություն են կազմում այն անձինք, որոնց նկատմամբ ժառանգատուն կտակ կազմել է մահափորձ կատարելուց հետո»: Պետք է ասել, որ Հայկական ՍՍՀ 1964 քաղաքացիական օրենսգրքով անարժան զավակների ինստիտուտն ավելի նեղ հնարավորություններ էր ընձեռում քաղաքացիներին ժառանգությունից մեկուսացնելու համար: Այսպես, Հայկական ՍՍՀ օր. 534-րդ հոդվածով սահմանվում էր, որ «Ոչ ըստ օրենքի, ոչ ըստ կտակի ժառանգությունից զրկվում են այն անձինք, ովքեր ժառանգատուի, նրա ժառանգներից որևէ մեկի դեմ կամ ժառանգատուի՝ կտակում արտահայտված վերջին կամքի իրականացման դեմ ուղղված իրենց հակաօրինական գործողություններով նպաստել են իրենց որպես ժառանգներ ճանաչելուն (ընդգծ. մերն է)»⁷: Հիշյալ հոդվածը համեմատելով ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի 1191-րդ հոդվածի 1-ին կետի հետ՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ օրենսդրությունը բավական ընդլայնել է այն հիմքերը, որոնց հիմքով քաղաքացիները կարող են ճանաչվել անարժան ժառանգներ և մեկուսացվել ժառանգությունից: Ուշադիր վերլուծելով ՀՀ քաղ. օր. 1191-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը՝ նկատում ենք, որ օրենսդիրը հիշյալ ինստիտուտներկայացրել է այնպիսի ձևակերպմամբ, որի պայմաններում որևէ նշանակություն չի տրվում, թե ժառանգատուին կյանքից զրկելը կամ նրա դեմ հանցավորձ կատարելն ինչ շարժառիթ կամ մոտիվացիա է պարունակում: Ստացվում է այնպես, որ կարող են շեշտակիորեն ավելանալ այն դեպքերը, երբ քաղաքացիները կճանաչվեն անարժան ժառանգներ և կմեկուսացվեն ժառանգությունից: Դիտավորյալ հանցագործությունները կարող են կատարվել տարբեր հանգամանքներում, որոնք, սակայն, որևէ կերպ կարող են առնչություն չունենալ ժառանգություն ստանալու մտադրության հետ: Ըստ օրենքի ժառանգը հոգեկան խիստ հուզմունքի (խանդի, վրեժի և այլ հիմքերով) կամ անհրաժեշտ պաշտպանության պայմաններում կարող էր սպանել այնպիսի անձի (այստեղ մեղքը դրսևորվում է դիտավորյալմբ), որը միաժամանակ կարող էր լինել նրա համար որպես ժառանգատու, կամ ըստ օրենքի այլ ժառանգ: Որքանով է ողջամիտ նրան մեկուսացնել ժառանգությունից, երբ սպանության պահին նա ամենևին չի էլ հիշել կամ գիտակցել, թե ում հանդեպ է ոտնձգում: Ուրիշ բան, երբ ըստ օրենքի ժառանգը ժառանգատուի կամ ըստ օրենքի ու

ըստ կտակի այլ ժառանգների հանդեպ դիտավորյալ ոտնձգություն է կատարել հենց ժառանգություն ստանալու մտադրությամբ, այսինքն՝ նրա դիտավորյալ մեջ պետք է առկա լինի հենց այս շահադիտական նկատառումը:

Այս հարցը միանշանակ չի ընդունվում դատական պրակտիկայում և իրավաբանական գրականության մեջ: Տ.Չայցևան և Պ.Կրաշենինսկովը համարում են, որ ժառանգին անարժան համարելու և ժառանգությունից մեկուսացնելու համար բավական է, որ նա դիտավորյալ հակաօրինական արարք կատարած լինի ժառանգատուի կամ նրա ժառանգների դեմ: Եթե այդ գործողություններն ինքնին օբյեկտիվորեն հանգեցնում են կամ պետք է հանգեցնեն ժառանգություն ստանալուն կամ ժառանգման բաժինն ավելացնելուն, ապա որևէ նշանակություն չպիտի ունենա այդ գործողությունների մոտիվացիան⁸: Նման մոտեցումը համարվում է ժառանգների անարժանության «օբյեկտիվ ուղղվածություն», որին կողմնակից են բազմաթիվ իրավագետներ՝ Է.Բ. Էյդինովա, Կ.Բ.Յարոշենկո, Յու.Մ.Գիլման, Յու.Ն.Վլասով և այլք⁹: Առանձին հեղինակներ, որպես հիմնավորում, նշում են, որ մոտիվացիան որևէ նշանակություն չունի: Եթե ժառանգատուի կամ նրա ժառանգների հանդեպ կատարվել է դիտավորյալ հակաօրինական գործողություն, ապա բարոյական չի համարվի իրավախախտին ժառանգ համարելու հարցը կախման մեջ դնել այն հանգամանքից, թե ինչպիսի շարժառիթներով է նա նման քայլի գնացել: Լ.Վ.Սաննիկովան գրում է, որ «անկախ մոտիվացիայից՝ իրավախախտ անձին պետք է մեկուսացնել ժառանգությունից, այլս օրենքի ոգուն»¹⁰: Ռեալիկի կարգով նշենք, որ եթե այստեղ հարցն ունի այդքան բացարձակ բարոյական արժեք, որը միաժամանակ լրացնում է օրենքի ոգին, ապա նույն օրենքի ոգին նաև չպետք է ճանաչեր նման քաղաքացիների ժառանգման իրավունքը, երբ նրանց հակաօրինական գործողություններից հետո ժառանգատուն ներել և կտակում նրանց բաժին է հատկացրել: Նշանակում է՝ օրենքի ոգին այդ հարցում այնքան էլ կատեգորիկ-ինմպերատիվ չէ, ինչպես կարելի էր սպասել, և դա, իհարկե, ողջունելի է:

ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի Պլենումի 1991թ. N2 որոշմամբ՝ ժառանգման հարցերով դատարաններում ծագող որոշ հարցերի պարզաբան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ման մասին, սահմանվում է, որ ժառանգությունից մեկուսացնելու համար բավական է, որ անձի դիտավորյալ և անօրինական գործողությունները նպաստած լինեն ժառանգ ճանաչելուն¹¹ : Առանձին հեղինակներ ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի Պլենումի 1991թ. N2 որոշման կապակցությամբ նշում են, որ իբրև թե այստեղ տրամաբանական շեշտը դրվում է գործողությունների օբյեկտիվ կողմի, այլ ոչ թե իրավախախտի մոտիվացիայի վրա: Սակայն ուշադիր վերլուծելով հիշյալ որոշումը՝ նկատում ենք, որ այնտեղ ավելի շուտ շեշտադրվում է այն, որ հակաօրինական գործողությունները պետք է կատարվեն դիտավորյալ, այլ ոչ թե այն, որ իբրև դրանցում մոտիվացիան նշանակություն չունի:

Անդրադառնալով բարձրացված խնդրին՝ պրոֆ. Յու.Կ.Տոլստոյն արդեն կատեգորիկ դիրքերից հանդես չի գալիս և ուղակիորեն չի ժխտում շահադիտական մոտիվացիայի հանգամանքը: Նա նախ նշում է, որ ՌԴ օրենսդրությունը ձևակերպված է այնպես, որ ուղակիորեն չի հաստատվում կամ ժխտվում շահադիտական մոտիվացիան: Եվ այնքանով, որքանով դատական պրակտիկան երկարատև կիրառման հետևանքով ամրագրել է այն սկզբունքը, որ անարժան ժառանգին որպես այդպիսին ճանաչելու հարցում նշանակություն չունի շահադիտական մոտիվացիան, ուստի Յու.Կ.Տոլստոյը համարում է, որ նման պրակտիկան իրեն արդարացրել է, և կարիք չկա նրանից հրաժարվելու¹² :

Առանձին հեղինակներ, ընդհակառակը, նշում են, որ ժառանգություն ստանալու կամ ժառանգական բաժինն ավելացնելու նպատակը պետք է առկա լինի դիտավորյալ հակաօրինական գործողություններում, որպեսզի քաղաքացին ճանաչվի անարժան ժառանգ և ժառանգությունից մեկուսացվի¹³ : Սա էլ համարվում է ժառանգների անարժանության «սուբյեկտիվ ուղղություն», որին հարում են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են՝ Օ.Ս.Իոֆֆեն, Մ.Գ.Գուրեվիչը, Մ.Յու. Բարշևսկին¹⁴ :

Այն, որ ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ շեշտադրվում է միայն դիտավորյալ հակաօրինական արարքի միայն օբյեկտիվ կողմը, մեզ համար համոզիչ չէ հետևյալ պատճառաբանությամբ: ՌԷշադիր լինենք ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1117-րդ հոդվածի ձևակերպմանը, համաձայն որի՝ «Ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի չեն ժառանգում այն քաղաքացիները, ովքեր իրենց դի-

տավորյալ հակաօրինական գործողություններով, որոնք ուղղված են եղել ժառանգատուին կամ ժառանգներից որևէ մեկին կամ կտակարարի վերջին կամքի իրականացմանը, նպաստել կամ փորձել են նպաստել (ընդգծ. մերն է) իրենց կամ այլ անձանց ժառանգության հրավիրելուն, իրենց կամ այլ անձանց ժառանգության բաժնի ավելացմանը, եթե այդ հանգամանքները հաստատվել են դատական կարգով: Սակայն այն քաղաքացիները, ում օգտին ժառանգատուն կտակ է կազմել ժառանգությունից մեկուսացվելուց հետո, իրավունք ունեն ժառանգություն ստանալ»:

Այստեղ ուղակիորեն երևում է, որ քաղաքացիների հակաօրինական գործողություններն «ինքնին ոչ թե հանգեցրել են համապատասխան հետևանքների», այլ քաղաքացիներն իրենց հակաօրինական գործողություններով «նպաստել կամ փորձել են նպաստել համապատասխան հետևանքներին»: «Նպաստել են կամ փորձել են նպաստել» արտահայտությունն ակնհայտորեն իր մեջ նպատակատուղվածություն է պարունակում, այսինքն՝ մոտիվացիան այստեղ կասկածից վեր է: Եթե օրենսդիրը ցանկանար շեշտել, որ մոտիվացիան նշանակություն չունի այդ հարցում, նա կարող էր 1117-րդ հոդվածում նախատեսել մոտավորապես հետևյալ կարգի շարադրանք. «Ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի չեն ժառանգում այն քաղաքացիները, որոնց դիտավորյալ հակաօրինական գործողությունները, որոնք ուղղված են եղել ժառանգատուին կամ ժառանգներից որևէ մեկին կամ կտակարարի վերջին կամքի իրականացմանը, հանգեցրել կամ կարող էին հանգեցնել իրենց կամ այլ անձանց ժառանգության հրավիրելուն, իրենց կամ այլ անձանց ժառանգության բաժնի ավելացմանը, եթե այդ հանգամանքները հաստատվել են դատական կարգով»:

Որոշ երկրների իրավական համակարգերում մոտիվացիան նաև ուղակիորեն է նախատեսվում: Օրինակ Հունգարիայի 1977թ. քաղաքացիական օրենսգրքի 602-րդ հոդվածի Ե) կետում նշվում է, որ անարժան ժառանգ է այն անձը, ով ժառանգություն ստանալու նպատակով ոտնձգում է ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգի նկատմամբ¹⁵ :

Այսպիսով, անարժան ժառանգներին որպես այդպիսին ճանաչելու հարցում անհրաժեշտ պայման է համարվում նրանց դիտավորյալ հակաօրի-

www.journal.lawinsstitute.am

նական գործողություններում դրսևորվող մոտիվացիան, այն է՝ անպայման հասնել ժառանգություն ստանալուն կամ ժառանգման բաժինն ավելացնելուն: Այս ասպեկտով անհրաժեշտ է վերաձևակերպել ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածի 1-ին կետը և շեշտադրել, որ կյանքից դիտավորյալ գրկելը կամ մահավորձ կատարելը պայմանավորված է եղել հենց ժառանգություն ստանալու կամ ժառանգման բաժինն ավելացնելու նկատառումներով:

Երբ մենք ուշադիր հետևում ենք Հայաստանի թե՛ նախորդ և թե՛ գործող օրենսդրության ձևակերպումներին, ապա երկուսի դեպքում էլ նկատում ենք նույն մոտեցումը. անարժան ժառանգն իր հակաօրինական գործողությունները հանգեցրել կամ կարող էին հանգեցնել այդ անձի կողմից ժառանգություն ստանալուն: Մենք շեշտադրում ենք այս հանգամանքը՝ նկատի ունենալով, որ անօրինական գործողությունները կարող էին հանգեցնել ոչ միայն ոտնձգողի կողմից ժառանգություն ստանալուն կամ նրան հասանելիք ժառանգության չափի ավելացմանը, այլև կարող էին հանգեցնել երրորդ անձանց կողմից ժառանգություն ստանալուն կամ երրորդ անձանց հասանելիք ժառանգության չափի ավելացմանը:

Այս կապակցությամբ հստակ դիրքորոշում է ցուցաբերում Ռուսաստանի օրենսդիրը՝ քաղաքացիական օրենսգրքի 1117-րդ հոդածում նշելով. «Ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի չեն ժառանգում այն քաղաքացիները, ովքեր իրենց դիտավորյալ հակաօրինական գործողություններով, որոնք ուղղված են եղել ժառանգատուին կամ ժառանգներից որևէ մեկին, կամ կտակարարի վերջին կամքի իրականացմանը, նպաստել կամ փորձել են նպաստել (ընդգծ. մերն է) իրենց կամ այլ անձանց ժառանգության հրավիրելուն, իրենց կամ այլ անձանց ժառանգության բաժնի ավելացմանը, եթե այդ հանգամանքները հաստատվել են դատական կարգով»: Սա համարվում է օրենսդրական նորարարություն, որը լուրջ կանխարգելիչ նշանակություն կարող է ունենալ ընտանեկան հարաբերությունների ոլորտում հանցավորության նվազեցման ուղղությամբ: Սակայն միևնույն ժամանակ պետք է շեշտենք, որ ՌԴ օրենսդրի այս նորարարությունը դեռևս համակողմանի և ամբողջական դրկտրինալ գնահատականի չի արժանացել¹⁶:

Մեր գնահատմամբ, այդ դեպքերում, երբ քաղաքացին, ով միաժամանակ հանդիսանում է

ժառանգ, ոտնձգում է ժառանգատուի կամ հնարավոր այլ ժառանգների դեմ, որի արդյունքում ոչ միայն ինքը, այլև երրորդ անձինք կարող են հրավիրվել ժառանգության կամ կավելանա ոչ միայն իր, այլև երրորդ անձանց ժառանգության բաժինը, այդ դեպքում նոր միայն տրամաբանական է և ողջամիտ է, երբ այդ քաղաքացին կարող է ճանաչվել անարժան ժառանգ և մեկուսացվել ժառանգությունից: Իսկ եթե քաղաքացին կատարում է նման ոտնձգություն, որի արդյունքում միայն երրորդ անձինք կարող են հավակնել ժառանգություն ստանալուն կամ կավելանա երրորդ անձանց ժառանգության բաժինը, իսկ ոտնձգող քաղաքացին ժառանգ չի հանդիսանում տվյալ պարագայում, ապա անիմաստ և անհեթեթ է ստացվում նման անձին անարժան ժառանգ ճանաչելու հարց բարձրացնելը:

Ի դեպ, քննարկվող հարցի կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ մենք երբեմն հանդիպում են նաև ծայրահեղ մոտեցումների: Այսպես, ռուս իրավագետ Օ.Յու. Շիդլիսուստը նշում է, որ պետք է ժառանգությունից մեկուսացնել ոչ միայն այն անձանց, ովքեր կարող էին լինել ժառանգներ ժառանգատուի կամ հնարավոր ժառանգների դեմ իրենց ոտնձգությունների արդյունքում, այլև ժառանգությունից պետք է մեկուսացվեն նաև երրորդ անձինք, ովքեր նման առավելություն են ստացել ոտնձգողի արարքի արդյունքում: Նշված հեղինակը համարում է, որ, անկախ երրորդ անձանց մեղքից, նրանք ևս պետք է մեկուսացվեն ժառանգությունից, քանի որ իրավական, բարոյական և ողջամիտ չի կարող համարվել սեփականության իրավունքի ծագումը մի ունեցվածքի նկատմամբ, որը բաժին է հասել հակաօրինական գործողությունների արդյունքում, թեկուզև այդ հակաօրինական գործողությունները ժառանգություն ստացողինը չեն¹⁷:

Նման մոտեցումն անընդունելի է այն պարզ պատճառաբանությամբ, որ անձինք կարող են պատասխանատվություն կրել միայն իրենց գործողությունների համար: Եթե քաղաքացին ստացել է ժառանգություն կամ ավելացել է նրան հասանելիք ժառանգության բաժինը մեկ այլ քաղաքացու կողմից ժառանգատուին ոտնձգելու արդյունքում, և այդ քաղաքացին մեղսակից է ոտնձգողին, ապա ժառանգը անարժան կհամարվի սահմանված իրավակարգավորման շրջանակներում, իսկ եթե մեղ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ասկից չէ, ապա նրան պատասխանատվության ենթարկելը և ժառանգությունից մեկուսացնելը կհամարվի օբյեկտիվ մեղսայնացում, ինչը լիովին ժխտվում է հայրենական իրավագիտության կողմից:

Անհրաժեշտ է ներկայացնել նաև, թե ինչպես, ինչ կարգով են անարժան ժառանգները մեկուսացվում ժառանգությունից: Նախ պետք է ասել, որ ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածը շարադրված է այն տրամաբանությամբ, որ անարժան ժառանգ լինելը և ժառանգությունից մեկուսացվելը տարբերակվում են, այսինքն՝ անարժան լինելը ավտոմատ կերպով, օրենքի ուժով չի հանգեցնում ժառանգությունից մեկուսացվելուն: Կարելի է ասել, որ ժառանգությունից մեկուսացվում են անարժան ժառանգները, սակայն անարժան ժառանգ լինելը միանշանակ չի հանգեցնում մեկուսացման: Այսպես, համաձայն ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածի 3-րդ մասի՝

«Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու համար հիմք են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և (կամ) վճիռը:

Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեն այն անձինք, որոնց համար նման մեկուսացումն առաջացնում է ժառանգության հետ կապված զուլքային հետևանքներ»:

Բերված դրույթները նշանակում են, որ եթե նման անձինք չդիմեն դատարան, ապա անարժան ժառանգի կողմից անօրինական գործողությունների մասին վկայող, օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և (կամ) վճիռն ինքնին չեն հանգեցնի մեկուսացման: ՀՀ օրենսդրի նման մոտեցման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ անարժան ժառանգների կողմից ժառանգություն ստանալու հարցում «վերջին խոսքի իրավունքը» ընտանքի անդամներինն է: Բացառված չէ, որ չնայած անարժան ժառանգների հակաօրինական վարքագծին՝ ընտանիքի անդամներն իրենք համաձայն լինեն նրանց կողմից ժառանգությունը ստանալուն, ուրեմն և չդիմեն դատարան մեկուսացնելու պահանջով:

Մեր գնահատմամբ, անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու իմաստն այն է, որ հնարավոր ժառանգների կողմից կանխվեն նման հնարավոր հակաօրինական արարքները: Պետությունը ըստ օրենքի ժառանգման բոլոր դեպ-

քերում հանդես է գալիս, այսպես կոչված, ժառանգատուի «ողջամիտ ներկայացուցչի» դերում, ով ամեն կերպ փորձում է ժառանգությունն օրենսդրոնե կարգավորել այնպես, ինչպիսին կցանկանար անել ժառանգատուն, եթե «նա ողջ լինել և ցանկանար կտակ կազմել»: Ենթադրվում է, որ ժառանգատուն չէր ցանկանա անարժան ժառանգին տեսնել իր իրավահաջորդի դերում, հետևաբար անարժան ժառանգին ժառանգությունից մեկուսացումը պետք է կատարվեր հենց օրենքի ուժով՝ ավտոմատ կերպով, այլ ոչ թե կախման մեջ դրվեր նրանից, թե արդյոք մյուս ժառանգները նպատակահարմար կհամարեն դիմել դատարան և մեկուսացնել անարժան ժառանգներին: Ի դեպ, հենց նման կարգավորում է նախատեսում նաև ՌԴ օրենսդիրը՝ քաղաքացիական օրենսգրքով սահմանելով, որ անարժան ժառանգները ոչ թե մեկուսացվում են ժառանգների պահանջով, այլ հենց օրենքի ուժով չեն ժառանգում (տես ՌԴ քաղ.օր. 1117-րդ հոդվածի 1-ին մաս): ՌԴ քաղ.օր. 1117-րդ հոդվածի 2-րդ մասով ժառանգությունից մեկուսացնելու տարբերակ նախատեսվում է միայն այն անձանց հանդեպ, ովքեր չարամտորեն խուսափել են հոգավ ժառանգատուի մասին:

Մեր գնահատմամբ, Հայաստանի օրենսդրությամբ ևս անհրաժեշտ է իրավակարգավորումը նախատեսել այնպես, որ անարժան ժառանգները զրկվեն ժառանգություն ստանալու իրավունքից հենց օրենքի ուժով համապատասխան դատավճիռը և (կամ) վճիռն ուժի մեջ մտնելու պահից:

Վերջում կցանկանալինք ուշադրություն հրավիրել մի կարևոր հարցի վրա, որի կապակցությամբ դժվար է ասել՝ կա՞ օրենսդրական բացթողում, թե՞ ոչ: Խոսքը վերաբերում է անարժան ժառանգներին մեկուսացնելուց հետո նրանց կողմից ժառանգությունը վերադարձնելուն: Այս հարցադրման մեջ որևէ պարադոքս չկա: Անարժան ժառանգները, մինչ կմեկուսացվեն ժառանգությունից, կարող էին արդեն ընդունած լինել ժառանգությունը, որն արդեն գտնվում է նրանց տիրապետման և օգտագործման տակ: Բացառված չէ, որ ժառանգությունն ընդունելուց հետո միայն պարզվի և բացահայտվի ըստ օրենքի ժառանգի կողմից ժառանգատուի նկատմամբ հակաօրինական արարք կատարելու փաստը: Ինչպե՞ս է որոշվելու անարժան ժառանգի կողմից արդեն ընդունված ժառանգության հետադարձի հարցը: Իհարկե, տվյալ պարա-

www.journal.lawinstitute.am

գայում մենք կարող ենք հենվել ՀՀ քաղ.օր. 61-րդ գլխի դրույթների վրա: ՀՀ քաղ.օր. 1092-րդ հոդվածի ուժով «Անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»: Անարժան ժառանգի ստացած ժառանգությունը միանշանակ պետք է վերադարձվի որպես անհիմն հարստացում: Մեր համոզմամբ, նման մոտեցումն անհրաժեշտ էր արտացոլել նաև ՀՀ քաղ.օր. 1191-րդ հոդվածում, որպեսզի իրերի դրությունը լիովին պարզ լիներ և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չտար: Մենք մտավախություն ունենք, որ գործող քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորման պայմաններում կարող է տեղ գտնել հետևյալ մեկ-

նաբանությունը, որ եթե անարժան ժառանգի ինստիտուտին նվիրված հատուկ իրավանորմերով նման կարգավորում չկա, ուրեմն օրենսդիրը հենց այդպես էլ ցանկացել է հարցը լուծել, և այս պարագայում չի կիրառվի ընդհանուր նորմը, քանի որ հատուկ նորմով արդեն իսկ «լռելյայն ասվել է այդ մասին»: Հասկանում ենք, որ նման մեկնաբանությունը խոցելի է, ընդունելի չէ, սակայն միևնույն ժամանակ հնարավոր տարբերակ է, և բացառված չէ, որ անարժան ժառանգները հենվեն նաև այս մեկնաբանության վրա: Քննարկվող հարցի առնչությամբ համապատասխան նորմ է նախատեսվում, օրինակ, ՌԴ քաղ.օր. 1117-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մեր կողմից ահազանգած՝ տարաբնույթ մեկնաբանությունների համար չթողնելով ծավալվելու որևէ հեռանկար:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (երրորդ մաս), (2-րդ հրատարակություն. լրացումներով), ԵՊՀ հրատ. Եր. 2009. էջ 304-305:
² Տե՛ս Антимонов Б., Граве К.Г. Советское наследственное право. М. 1955. С. 46-47.
³ Տե՛ս Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք: Ուսումնական ձեռնարկ /խմբ. Ս.Հ. Հովհաննիսյանի/ 1982. Ե. ԵՊՀ հրատ. էջ 525:
⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (երրորդ մաս). նույն տեղում, էջ 306:
⁵ Տե՛ս Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք: Ուսումնական ձեռնարկ /խմբ. Ս.Հ. Հովհաննիսյանի/ 1982. Ե. ԵՊՀ հրատ. էջ 525:
⁶ Տե՛ս Кабагов В.А. Новое в наследственном праве России //Государство и право. 2002. No 7. С. 93.
⁷ Տե՛ս ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքը այստեղ նույնությամբ փոխառվել է ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքի 1153-րդ հոդվածի ձևակերպումը: Բոլորովին նույնպես է ձևակերպված նաև Ղազախստանի քաղաքացիական օրենսգրքի 1045-րդ հոդվածում (սմ.: Гражданский кодекс Республики Казахстан. СПб. Изд. Юридический центр Пресс. 2002. С. 967):
⁸ Տե՛ս Зайцева Т., Крашенинников П. Наследственное право в нотариальной практике: комментарии (ГК РФ, ч.3, разд.5), метод. Рекомендации, образцы док., нормат.акты, судеб.практика: практ. пособие. 5-е изд., перераб. и доп. – М. Волгтерс Клувер. 2005. С. 61-62.
⁹ Տե՛ս Наследственное право /отв. ред. К.Б.Ярошенко/. М. Волгтерс Клувер. 2005. С. 66; Власов Ю.Н., Калинин В.В. Наследственное право Российской Федерации. Учеб.-метод. Пособие. М. Юрайт. М. 2002. С. 20; Комментарий к гражданскому кодексу РСФСР. Изд. третье, исправ. и доп. / отв. ред. Братусь С.Н., Садиков О.Н./ М. Юридическая литература. 1982. С. 635-636, Эйдинова Э.Б. Наследование по закону и завещанию. М. 1984. С. 9.
¹⁰ Տե՛ս Постатейный комментарий к гражданскому кодексу Российской Федерации частей первой, второй, третьей /под ред. Т.Е. Абовой, М.М. Богуславского, А.Ю. Кабалкина, А.Г.Лисицына-Светланова/. ЮРАЙТ. М. 2005.
¹¹ Տե՛ս Сборник постановлений Пленумов Верховных судов СССР и РСФСР (Российской Федерации) по гражданским делам. М. Спарк. 2001. С. 239-240.
¹² Տե՛ս Комментарий к гражданскому кодексу Российской Федерации. Часть третья (постатейный). /под ред.

А.П.Сергеева/. 3-е изд., перераб. и доп. – М. Изд-во Преспект. 2006. С. 22.

¹³ Տի՛ւ Լяпунов С.Г. Наследование: во Экзамен. 2003. С. 10; Լяпунов С.Г. Наследственные споры: Комментарий с разъяснениями законодательства. М. Изд-во Эксмо. 2005. С. 28.

¹⁴ Տի՛ւ Իоффе О.С. Советское гражданское право. Курс лекций. Ч. 3. Л. 1965. С. 290; Гуревич М.Г. Некоторые вопросы наследственного права //Ученые записки Пермского гос.университета им. А.М.Горького. Юрид науки. 1966. № 164. С. 100-101; Баршевский М.Ю. Субъекты права наследования по завещанию //Советское государство и право. 1981. № 4. С. 122;

¹⁵ Տի՛ւ Гражданский кодекс Венгерской Народной Республики. ... С. 263:

¹⁶ Տի՛ւ Наследственное право /отв.ред. .Б. Ярошенко/ М.2005. С. 65; Баринов Н. Новый гражданский кодекс Российской Федерации: Наследственное право //Закон. 2002. № 2. С. 113; Комментарий к гражданскому кодексу Российской Федерации, части третьей / под ред. Т.Е.Абовой, М.М. Богуславского, А.Г. Светланаова/ М. 2005. С. 79.

¹⁷ Տի՛ւ Шилохвост О.Ю. Проблемы правового регулирования наследования по закону в современном гражданском праве России. Автореф. на соиск. уч. степ. доктора юрид. наук. М. 2006. С. 30-31.

Нина Кудания

Аспирант кафедры гражданского права
и гражданско-процессуального права института права и политики
Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Институт недостойных наследников в законодательстве РА

Научная статья посвящена такому своеобразному институту в наследственном праве РА, каким является институт недостойных наследников. Данный институт неоднозначно принимается в правовой литературе, более того, внедрение этого института в законодательство РА пока далеко от удовлетворительной оценки. Стерженью настоящего исследования в сфере правового регулирования наследственных отношений связанных с недостойными наследниками, составляет разумное балансирование социальных и индивидуалистических начал, которое нарушено в рамках действующего правоприменения.

Автор, исследуя правовой опыт и правоприменение ряда стран, также учитывая особенности армянской семейно-правовой культуры, сделал интересный анализ и представил приемлемые предложения, которые могут существенно влиять на дальнейшее совершенствование наследственного права Республики Армения.

Ключевые слова: *недостойный наследник, наследник, гражданский кодекс, наследователь, право наследования.*

Nina Kutsanyan

PHD student in civil Rights of Russian- Armenian Slavonic university

SUMMARY

Institute of unworthy heirs in the legislation of RA

The scientific article is devoted to such a peculiar institution in inheritance law of RA, as the institute of unworthy heirs. The given institute is treated ambiguously in the legal literature, moreover, the introduction of this institute in the Legislation of RA is still far from satisfactory mark. The pivot of the present study in the field of legal regulation of hereditary relations connected with unworthy heirs is the reasonable balancing of social and individualistic principles, which is violated under the current law enforcement.

The author having investigated the law experience and law enforcement of a few countries, and also taking into consideration the Armenian family-legal culture held an interesting analysis and presented acceptable suggestions which can fundamentally influence the further perfection of the inheritance law of the Republic of Armenia.

Keywords: *unworthy heir, heir, civil code, ancestor of, heirship.*